



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

## Տերտերյան Անահիտ

ԵՊՀ, Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն, մագիստրանտ  
Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., դոց. Ա. Ալեքսանյան  
Էլ. փոստ՝ [anahit.terteryan@ysumail.am](mailto:anahit.terteryan@ysumail.am)

### ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Այսօր՝ տեխնոլոգիական դարաշրջանում, կյանքի ցանկացած ոլորտ զարգանում և շատ արագ փոփոխվում է: Այդ փոփոխությունների շրջափուլում ռիսկերը դարձել են մարդկանց կյանքի անբաժանելի մասը:

Կրթության գործընթացը զարգանում և փոփոխվում է շատ արագ: Որպեսզի այն չվնասվի, ավելին, կարողանա արդյունավետորեն զարգանալ այդ փոփոխությունների արագության հոսքում, անհրաժեշտ է որ կրթության ոլորտի ակտիվ սուբյեկտները կարողանան ճիշտ գնահատել և կառավարել ոլորտում առկա ռիսկերը: Դրանք երբեմն կարող են լինել նաև ոչ տեսանելի՝ վնասելով կրթության ամբողջ գործընթացը: Եթե կրթության գործընթացում ճիշտ գնահատվեն ռիսկերի ցուցանիշները և հմտորեն կառավարվեն դրանք, ապա կունենանք ավելի կայուն, և, միևնույն ժամանակ, ավելի զարգացող կրթության համակարգ:

Ներկայումս ՀՀ-ում չկան կրթական ռիսկերի գնահատման ընդարձակ ուսումնասիրություններ, սակայն այն հրատապ կարևորություն ունի, քանի որ տարիների փորձը ցույց է տալիս, որ կրթության բնագավառում թույլ տրված բազում խնդիրներ կապված են հենց ժամանակին այդ ռիսկերը հաշվի չառնելու հետ: Ընդ որում, այդ ռիսկերն առկա են ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտներում:

Հոդվածի նպատակն է վեր հանել ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացների առանձնահատկությունները կրթության համակարգում: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հանրակրթության համակարգում ուսումնասիրել և ներկայացնել ռիսկի էությունը, կրթական ռիսկերի առանձնահատկությունները, գնահատման ձևերը, ինչպես նաև կրթության գործընթացում ռիսկերի կանխարգելման միջոցները:

Ռիսկը որոշակի իրավիճակ է, որի պայմաններում սահմանափակվում են անձի հնարավորությունները՝ պայմանավորված էմոցիոնալ դաշտով և անկանխատեսելի արդյունքներով: «Ռիսկ» եզրույթը այլևայլ արտահայտչաձևերով կարող ենք գտնել տարբեր լեզուներում: Մի շարք լեզուներում ռիսկ բառն ունի արտահայտչական նմանություններ, օրինակ՝ իտալերենում՝ «risco» կամ «rischio», որը թարգմանաբար նշանակում է ռիսկ կամ վտանգ (ավելի վաղ հետքերը կարելի է գտնել իտալական «risco» և «rischio»), հունարենում՝ «rhizicon», պարսկերենում՝ «rozi(k)»: Հունարենում ռիսկ (rhizicon) բառը նախապես ունեցել է արմատ իմաստը, որը հետագայում փոխել է իր նշանակությունը և կապվել ժայռի հետ: Այս փոփոխությունը կապված է

միջնադարում նավաշինության և առևտրի զարգացման հետ: Այսպես, նավաստիների համար ժայռերը վտանգ էին ներկայացնում, քանի որ կարող էին բախվել դրանց: Այսպիսով, rhizicon բառն էվոլյուցիայի ընթացքում դարձել է պարզապես ռիսկ, այսինքն՝ վտանգ: Նախնական տարբերակով շատ լեզուներում այս բառն ունի հենց վտանգ իմաստը: Ներկայումս ևս շատերի համար ռիսկն ասոցացվում է վտանգի հետ, միայն մոտեցումներն են տարբեր. եթե միջնադարում ռիսկերը կապում էին միայն Աստծո և ճակատագրի հետ, այժմ ռիսկ ասելով երբեմն հասկանում ենք հնարավոր կորստի վտանգը, որը կախված է բնության երևույթներից և մարդկային գործունեության ձևերից: Միևնույն ժամանակ, վտանգը դեռ ռիսկ չէ: Վտանգը գոյություն ունի անկախ, և մինչ որոշակի պահ հավասարության նշան դնել ռիսկի և վտանգի միջև, ճիշտ չէ:

Ռիսկի դիմելը որոշվում է սեփական ընտրությամբ՝ գիտակցաբար և նպատակաուղղված: Սուբյեկտը դիմում է ռիսկի՝ իմանալով ռիսկի պատճառները և աղբյուրները՝ օգտագործելով անվտանգության մեխանիզմները, նվազեցման եղանակները, որոնք չեն բացառում խուսափումը ռիսկից [1]: Սակայն որքանով են ռիսկ և վախ հասկացությունները նույնացվում, և ո՞րոնք են դրանց տարբերությունները: Այս հարցի պատասխանը տվել է Նիկլաս Լումանը, ով շեշտադրել է վտանգի և ռիսկի տարբերությունները: Ըստ նրա՝ *«եթե հավանական վնասը դիտարկվում է որպես որոշման հետևանք, այդ դեպքում մենք խոսում են հատկապես որոշման ընդունման ռիսկի մասին, իսկ եթե վնասի պատճառներն արտաքին են, այսինքն այն վերագրում ենք արտաքին աշխարհին, այդ դեպքում խոսում ենք վտանգի մասին»*: Մեկ այլ մոտեցմամբ՝ ռիսկը մարդու կողմից գիտակցված փաստ է, որը գոյություն ունի մարդու կամքից անկախ՝ ապագայում տեղի ունեցող իրադարձության արդյունքների անորոշության հետ [1]:

Սուբյեկտն այս դեպքում բախվում է անորոշությունների զանազան տարատեսակների հետ: Դրանց համալիրն իր համամասնության մեջ կազմում է, այսպես կոչված, կրիտիկական անորոշություն, որի դեպքում գործողության մեջ է մտնում ռիսկի տարրը:

Մարդկային գործունեության ցանկացած բնագավառում լիովին խուսափել ռիսկից անհնար է, քանի դեռ այն կապված է մարդկանց կողմից ընդունվող որոշումների ելքի վրա ազդող բազմաթիվ պայմանների և գործոնների հետ: Վ. Կուզմինն ու Ա. Գոբենկոն անորոշությունը կապում են գործունեության պայմանների կամ հետևանքների մասին տեղեկատվության թերի լինելու կամ անստույգության հետ: Իսկ Վ. Տամբովցևը և Գ. Կելնեռն անորոշությունը պայմանավորում են այն գործոններով, որոնց վրա մարդը չի կարող ազդել (օբյեկտիվ անորոշություն): Սա պայմանավորված է արտաքին միջավայրի մասին սուբյեկտի գիտելիքների պակասով (սուբյեկտիվ անորոշություն):

Այսպիսով, ռիսկերը պայմանավորված են մեր գործունեությամբ, և դրանք մեր ընտրության սահմանափակվածությունն են անորոշ իրավիճակներում:

Մանկավարժական ռիսկաբանությունը մանկավարժության մեջ համեմատաբար նոր ուղղություն է, որն ուսումնասիրում է մանկավարժի վարվեցակարգային ասպեկտներն ինչպես մասնագիտական գործունեության մեջ, այնպես էլ սոցիալ-տնտեսական և հոգեբանական երևույթներում, և այն մանկավարժական գործունեության մեջ մանկավարժի անխուսափելի ընտրություն է [3]:

Ռիսկի խնդիրն ուսումնասիրելու սոցիալ-մանկավարժական մոտեցումը կապված է անձի սոցիալականացման գաղափարի հետ, այսինքն՝ ինչ է ռիսկ կրթության գործընթացում, որը թույլ չի տալիս, որ մանկավարժական գործունեությունը արդյունավետ, ստեղծագործական, նորարար և համագործակցային լինի: Այն դեպքում, երբ կրթության գործընթացը չի ընթանում վերոնշյալի պես, ապա պետք է հասկանալ՝ որոնք են եղել այն ռիսկերը, որոնք հաշվի չեն առնել մանկավարժները: Ռիսկի նկատմամբ պատրաստակամությունը Ե. Ռ. Խաբաբուլինը և Լ. Մ. Միտինան կապում են ուսուցիչի մասնագիտական զարգացման հետ [4]: Այսինքն, մանկավարժը միշտ պետք է պատրաստ լինի նորը սովորելուն և ինքնազարգանալուն, այլապես սրա բացակայությունն ինքնին ռիսկ է կրթության գործընթացում: Դպրոցն ինքնին զարգացող համակարգ է, որը ենթադրում է առաջին հերթին դասավանդողների զարգացում: Որոշ հետազոտողներ, ինչպիսիք են՝ Ա. Դերկաչը, Վ. Գ. Ջալիկինը, Մ. Ցուկարմենը, դասավանդողի ռիսկակայունությունը ոչ միայն վերագրում են դասավանդողի գիտելիքների պաշարի և ինքնազարգացման պատրաստակամությանը, այլև տվյալ մարդու անձնային և հոգեբանական առանձնահատկությունների և մանկավարժական փորձին [5]:

Պ. Իյինը, ռիսկը որակելով իբրև տվյալ իրավիճակում անձի անորոշություն, տարանջատում է ռիսկերի հետևյալ տեսակները՝

- կանխամտածված և ոչ ցանկալի,
- օբյեկտիվ և սուբյեկտիվ,
- իրական և երևակայական,
- արդարացված և չարդարացված,
- ընդունելի և անընդունելի:

Իյինը որպես մանկավարժական ռիսկեր է դիտարկում կրթական ծրագրերի անփոփոխելիությունը, կրթության գործընթացում ուսուցչի կողմից երեխայի ունակությունները և հակումները բացահայտող տարբեր մեթոդների կիրառման բացակայությունը: Աբրամովան մանկավարժական ռիսկ է դիտարկում ուսուցիչների գործունեության մեջ ստեղծագործականության բացակայությունը: Ն. Դ. Սուխովեան մանկավարժական ռիսկը պայմանավորում է դասավանդողների՝ դպրոցի (համալսարան, քոլեջ կամ այլ ուսումնական հաստատություն) և աշակերտների, ուսանողների նկատմամբ վերաբերմունքով: Վերջինս առանձնացրել է ռիսկի առաջացման մի քանի բաղադրիչներ՝

• **առաջին բաղադրիչը** սահմանում է դասավանդողների պատասխանատվության գործակիցն իրենց կատարած գործունեության նկատմամբ,

• **Երկրորդ բաղադրիչում** մանկավարժական ռիսկը բնորոշվում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում անորոշ իրավիճակներում մանկավարժի ճիշտ ընտրություն,

• **Երրորդ բաղադրիչը** պայմանավորված է կրթական գործընթացի մասնակիցների հարաբերությունների կարգավորմամբ,

• **չորրորդ բաղադրիչն** արտացոլում է ուսուցիչների թիմի անդամների մանկավարժական գործողությունների հետևողականությունը [6]:

Սուխոմլինսկու դպրոցը դիտարկում է փոքրիկ հասարակություն՝ ռիսկերը մեծամասամբ կապելով այդ հասարակության անդամների միջև փոխհարաբերություններով՝ ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-կառավարող սուբյեկտ, աշակերտ-կառավարող սուբյեկտ և աշակերտ-ուսուցիչ-կառավարող սուբյեկտ: Ռաիմենը մանկավարժական մեծ ռիսկ է դիտարկում ուսուցչի ռիսկակայունության և սթրեսակայունության բացակայությունը, այն է՝ երեխան կարող է սթրեսի մեջ ընկնել ուսուցչի պատճառով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ այսօր մի շարք ուսուցիչներ սթրեսակայուն չեն և երեխայի նկատմամբ կարող են ցուցաբերել վատ վերաբերմունք: Այստեղ մեծ է ռիսկը, որ երեխան կհիասթափվի ուսուցչից, նրա մոտ տվյալ ուսուցչի նկատմամբ վախ կձևավորվի: Այստեղ առաջ է գալիս նաև այն ռիսկը, որ վախը կփոխանցվի նաև դասավանդվող առարկային [7], այսինքն, ուսուցչով պայմանավորված՝ երեխան տվյալ բնագավառի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերել չի ցանկանում:

Կրթության գործընթացում առկա են կրթական մի շարք ռիսկեր, որոնք կարող չէզոքացվել միայն այն դեպքում, երբ ակտիվ սուբյեկտները կարևորեն կրթական ռիսկերի գոյությունը և ինքնազարգացման ու հեռատեսության միջոցով փորձեն արդյունավետորեն լուծել դրանք:

Ռիսկի գնահատումն անհրաժեշտություն է այն դեպքում, երբ կրթության գործընթացում արդեն իսկ հայտնաբերվել է որևէ ռիսկ, և մեզ անհրաժեշտ է պարզել այդ ռիսկի բացասական ազդեցության չափը կրթության գործընթացում: Այս դեպքում պետք է գնահատել այդ կրթական ռիսկի հնարավոր բոլոր հետևանքները:

Հայտնի է, որ կարելի է արդյունավետ կառավարել միայն այն, ինչը կարելի է գնահատել: Այլ կերպ ասած, մենք կարող ենք կառավարել ոչ թե ռիսկը, այլ դրա ցուցանիշների արժեքները և ոչ ավելին: Ռիսկի գնահատման մեթոդները սահմանում են դրանց կառավարման մեթոդները, ուստի ռիսկի ճիշտ կառավարման համար անհրաժեշտ է այն լիովին գնահատել, քանի որ ինչպես գնահատենք, այնպես էլ կկառավարենք:

Եթե փորձենք կրթական ռիսկերը դիտարկել բարձրագույն դպրոցներում, ապա կտեսնենք, որ դրանք բավականին շատ են, քանի որ ժամանակին չեն բացահայտվել և գնահատվել, իսկ այսօր արտահայտվում են շատ ավելի մեծ խնդիրների տեսքով: Առանձնացնենք կրթական ռիսկերից ամենաակնառուն՝ կրթական ծրագրերի համապատասխանությունը այսօրվա աշխատաշուկայի պահանջներին: Ներկայումս



բարձրագույն կրթություն ստացած անձանց զգալի մասը չի աշխատում իր մասնագիտությամբ, քանի որ ստացած գիտելիքները կա՛մ չեն համապատասխանում այսօրվա աշխատաշուկայի պահանջներին, կա՛մ տվյալ ոլորտում թողարկած մասնագետների գերաճ կա: Այս խնդիրները կարող էին չլինել, եթե բուհերը նախօրոք կատարեին կրթական ծրագրերի վերաբերյալ ռիսկերի գնահատում՝ կրթական ծրագրերը համապատասխանեցնելով աշխատաշուկայի իրական պահանջներին: Յուրաքանչյուր տարի բարձրագույն դպրոցները թողարկում են մեծ թվով մասնագետներ, որոնցից քչերն են համապատասխանում գործատուի պահանջներին, իսկ բուհերի չարձանագրած այդ ռիսկերն առաջացնում են հավելյալ ռիսկեր, որոնք հայտնաբերման և լուծման ավելի բարդ եղանակներ են պահանջում այսօր: Հետևապես, ռիսկի գնահատումը առաջնային է կառավարման գործընթացում:

Համաձայն ամերիկյան «Նախագծերի կառավարման ինստիտուտի» մշակումների՝ ռիսկերի կառավարման գործընթացը ներառում է հետևյալ ընթացակարգերի կատարումը.

1. ռիսկի կառավարման նախագծում,
2. ռիսկի որոշակիացում,
3. ռիսկի որակական գնահատում,
4. ռիսկի քանակական գնահատում
5. ռիսկի գործոնների վրա ազդեցության նախագծում,
6. մոնիթորինգ և վերահսկում [1]:

Այս բոլոր ընթացակարգերը փոխկապակցված են: Այստեղ պետք է կարևորել ռիսկի որոշակիացումը, քանի որ եթե ռիսկը մեզ համար անձանոթ է, և մենք չենք պատկերացնում՝ ինչ վտանգներով է հղի, ապա չենք կարող դրանք կառավարել: Ռիսկի որոշակիացումը ներառում է հետևյալ քայլերը՝

- ռիսկի բացահայտում,
- ռիսկի անվանակոչում,
- ռիսկի նկարագրում [1]:

Ռիսկի որոշակիացման ընթացքում կազմվում են ուսուցման գործընթացի վրա ազդող կրթական ենթադրյալ ռիսկերի ցանկն ու դրանց առաջացման պատճառները, բնութագրվում են ռիսկերի հատկանիշները և այլն:

Ռիսկի որոշակիացումը ռիսկի կառավարման հիմքն է: Այն անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Կարևոր է գնահատել, թե ինչպես կարող է բացասաբար ազդել այդ կրթական ռիսկը ուսուցման գործընթացի վերջնարդյունքի վրա: Որպես օրինակ դիտարկենք հետևյալը. 2006-12 թթ. ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին 12-ամյա հանրակրթական համակարգին անցման և եռամյա կրթակարգով առանձին գործող ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրերը, որոնց իրականացման արդյունքում ՀՀ հանրակրթական միջնակարգ դպրոցների մի մասը վերակազմակերպվեց ավագ դպրոցների: Առանձին ավագ դպրոցների հիմնադրումը, որն ի սկզբանե նախատեսում էր ապահովել կրթական ծրագրերի ու հոսքերի

բազմազանություն, սովորողների համար կրթական հնարավորությունների ընդլայնված շրջանակ, պետք է ավագ դպրոցներում էապես նպաստեր կրթության որակի բարելավմանը [2], սակայն ծրագիրն ամբողջովին կյանքի չկոչվեց: Կրթական ծրագրերի անկատարությունը որպես ռիսկ որոշակի էր, սակայն հաշվի չէր առնվել, թե այդ ռիսկը որքանով կարող էր ազդել ուսուցման գործընթացի և դրա վերջնարդյունքի վրա:

Ցանկացած ռիսկի նկատմամբ անհրաժեշտ է համալիր մոտեցում: Սա նշանակում է, որ կախված ռիսկի ծավալից և հրատապությունից, պետք է ընտրել ռիսկի գնահատման մեթոդը: Կարող են կիրառվել հետևյալ մեթոդները՝

- Որակական (Qualitative)՝ որոշվում է ռիսկի գործոնները,
- Քանակական (Quantitative)՝ որոշվում են ռիսկի աստիճանները,
- Հիբրիդային (Hybrid)՝ որակական և քանակական մեթոդների համակցություն

[1]:

Որակական գնահատման ընթացքում իրականացվում է ռիսկի առաջացման գործոնների բացահայտում և ռիսկի աստիճանի որոշում, իսկ քանակական գնահատման ընթացքում՝ մաթեմատիկական, մեթոդներով վիճակագրական տվյալների մշակում և ռիսկի աստիճանի քանակական արտահայտում [1]:




**Գծապատկեր 1.** Որակական և քանակական ռիսկերի գնահատում

Ռիսկի որակական գնահատումը որոշակիացած ռիսկի որակական վերլուծության գործընթաց է, որը գնահատում է որոշակիացված ռիսկերի կարևորությունը հետագա վերլուծության կամ ուղղակի նվազեցման համար: Այս մեթոդն ավելի պարզ է և կիրառելի: Ռիսկի որակական գնահատումը իրականացվում է ստանդարտ մեթոդներով և միջոցներով, ինչպիսիք են՝

- ինդուկտիվ մոտեցումը (փաստերի հավաքագրում, համակարգում և ընդհանրացում),

- դեդուկտիվ մոտեցումը (վարկածների առաջադրում, որոնք հետագայում համադրվում են փաստերին),
- պոզիտիվ մոտեցումը (ուսումնասիրվում է այն, ինչ կա),
- նորմատիվ մոտեցումը (արտահայտում է սուբյեկտիվ պատկերացումներ այն մասին, թե ինչ կարող է լինել) [1]:



**Գծապատկեր 2.** Ռիսկերի որակական գնահատում

Որակական գնահատում անցկացնելիս ռիսկի աստիճանները դիտարկվում են որպես ցածր, չափավոր, բարձր կրիտիկական և անթույլատրելի: Տվյալ մոտեցումը սուբյեկտիվ է, բայց մի շարք հետազոտողների համար այս մեթոդն ամենաընդունելին է:

Սա այն մեթոդիկան է, որի ընթացքում որոշվում է յուրաքանչյուր ռիսկի առաջացման հավանականությունն՝ ըստ աստիճանավորում ունեցող բարձր (high), լուրջ (serious), միջին (medium), ցածր (low) սանդղակների:

- H = բարձր ռիսկ՝ պահանջում է մանրակրկիտ հետազոտություն և կառավարում,
- S = լուրջ ռիսկ՝ անհրաժեշտ է հստակ կառավարման բարձր մակարդակի ուշադրություն,
- M = միջին ռիսկ՝ անհրաժեշտ է հստակ սահմանված լինի կառավարման պատասխանատվությունը,
- L = ցածր ռիսկ՝ հաղթահարվում է սովորական ընթացակարգով:

Այս մեթոդաբանության կիրառման դեպքում առանձին ռիսկերի գնահատականների հիման վրա ընդհանուր գնահատական է դրվում ամբողջ համակարգին, իսկ ռիսկերը դասավորվում են ըստ կարևորության: Տվյալ մեթոդիկան թույլ է տալիս արագորեն իրականացնել ռիսկի որակական գնահատում [1]:

Ռիսկը ենթադրում է նաև զարգացում, քանի որ կրթության ոլորտում ներդրվող ցանկացած նորարարություն, սկզբնական փուլում պարունակում է որոշակի ռիսկեր, որոնք դասակարգվում և լուծվում են ըստ հրատապության և առաջնայնության: Երբեմն նույնիսկ ռիսկ և զարգացում հասկացությունների միջև կարող ենք հավասարության նշան դնել: Ռիսկը ենթադրում է և՛ հաջողություն, ձեռքբերում, և՛ կորուստ:

Ամփոփելով և համակարգելով հոդվածը հանգել ենք հետևյալին՝ կրթության գործընթացում առկա են կրթական մի շարք ռիսկեր, որոնք կարող են չեզոքացվել միայն այն դեպքում, երբ գործընթացում առկա ակտիվ սուբյեկտները կարևոր են կրթական ռիսկերի գոյությունը՝ ինքնազարգացման, ավելի հեռուն տեսնելու, կանխատեսելու և տարբեր այլ մեթոդների միջոցներով փորձելով արդյունավետորեն լուծել դրանք: Ընդ որում, ռիսկերն անհնար կլինեն ճիշտ կառավարել, եթե չկարողանանք դրանք ճիշտ գնահատել, քանի որ կառավարվում են միայն այն ռիսկերը, որոնք ճիշտ են գնահատված, և վերջնարդյունքը որոշակիորեն տեսանելի է մեզ համար:

Կրթության գործընթացում առկա ակտիվ բոլոր սուբյեկտները պետք է իրենց լիարժեք մասնակցությունը կարևորեն կրթական ռիսկերի լուծման գործում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Գրիգորյան Ռ. Լ.**, Ռիսկերի կառավարում, Երևան 2010, էջ 7-8, 128-9, 131-2:
- [2] «Համայնքների ֆինանսիստների Հայաստան միավորում» ՀԿ, Հանրակրթական միջնակարգ և ավագ դպրոցների կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն, Երևան 2018, էջ 11:
- [3] **Михайлова Е. Н.**, Рискологические факторы и качество исследовательской деятельности педагога, Вестник Томского государственного педагогического университета, с. 60.
- [4] **Антонова Л. Н.**, Педагогическая рискология: теория и история, Проблемы современного образования, 2010, сс. 24-30.
- [5] **Тулегенова А. Г.**, К вопросу о профессиональных рисках в педагогической деятельности, УДК. 2013, с. 47.
- [6] **Суховеева Н. Д.**, Понятие и сущность риска как педагогического феномена [Электронный ресурс], URL: [http://www.superinf.ru/view\\_helpstud.php?id=2729](http://www.superinf.ru/view_helpstud.php?id=2729) (дата обращения: 13.01.2019).
- [7] **Proske D.**, Catalogue of risks, 2008 Springer-Verlag Berlin Heidelberg, p. 353.

**ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**Քանալի բառեր՝** ռիսկ, կրթական ռիսկ, ռիսկի գնահատում, ռիսկի կառավարում, հանրակրթություն, ռիսկի աստիճանի որոշում, անորոշ իրավիճակ, ռիսկի որոշակիացում, հավանական վնաս:

Կրթությունն արագ զարգացող և փոփոխվող գործընթաց է, և ներկայիս պայմաններում դրա լիարժեք և արդյունավետ կազմակերպումը բավականին բարդ գործընթաց է, իսկ գործընթացն արդյունավետորեն է իրականացվում միայն այն դեպքում, երբ կրթության ակտիվ սուբյեկտներն այն կազմակերպելիս հաշվի են առնում հնարավոր բոլոր ռիսկերը: Հոդվածում կարևորվել է կրթական ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացների առանձնահատկությունները կրթության համակարգում: Քանի որ ռիսկը մղում է զարգացման և առաջընթացի, ինչպես նաև հակառակը, սահմանափակ իրավիճակներում շատ կարևոր է կառավարող սուբյեկտի ճիշտ ընտրությունը: Առաձնացվել է հիմնական նաև այն քայլերը, որոնց միջոցով ռիսկերի կառավարումն արդյունավետորեն կիրականացվի: Այսօրվա փորձը ցույց է տալիս, որ կրթության համակարգում առկա մի շարք խնդիրներ գոյություն չէին ունենա, եթե կառավարող սուբյեկտները նախապես հաշվի առնեին հնարավոր բոլոր ռիսկերը:

Тертерян Анаит

**ОЦЕНКА И УПРАВЛЕНИЕ РИСКАМИ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ**

**Ключевые слова:** риск, образовательный риск, оценка риска, управление рисками, общее образование, определение уровня риска, неопределенная ситуация, идентификация риска, возможный вред.

Образование является быстро развивающимся и изменяющимся процессом, и это довольно сложный процесс, чтобы полностью и эффективно организовать его в современных условиях, и этот процесс эффективно реализуется только тогда, когда активные субъекты образования учитывают все возможные риски при их организации. В статье автор выделил особенности оценки образовательных рисков и процессов управления ими в системе образования. Поскольку риск направляет к развитию и прогрессу и наоборот, для правящей партии очень важно сделать правильный выбор в ограниченных обстоятельствах. Автор также выделил ключевые этапы, на которых управление рисками может быть эффективно реализовано. И сегодняшний опыт показывает, что существует ряд проблем в системе образования, которые существовали бы, если бы все возможные риски были приняты во внимание субъектами управления.

### **ASSESSMENT OF RISK AND MANAGEMENT IN EDUCATION PROCESS**

**Key words:** risk, educational risk, risk assessment, risk management, general education, risk level determination, an uncertain situation, risk identification, possible danger.

Education is a rapidly developing and changing process and it is quite a difficult process to organize it fully and effectively under today's conditions, and the process is effectively implemented only when active subjects of education take into account all possible risks when organizing them. In the article, the author highlighted the peculiarities of educational risk assessment and management processes in the education system. As the risk drives development and progress, and vice versa, it is very important for the ruling party to make the right choices in limited circumstances. The author has also highlighted the key steps in which risks management can be effectively implemented. And today's experience shows that there are some problems in the education system that would have existed if all the possible risks were taken into consideration by the management entities.